

«ՎՐԱՔԻ» ՈԱՍԿԱՆՎԱՆ ԲԱՅԱՆՎՅՏՄԱՆ ԱՌԹԻՎ

«Վրաքերի» անցած տարվա N 6-ում «Բանասիրական ճշգրտումներ» խորագրով տպագրած հաղորդմամբ բանասեր Ս. Շտիկյանը փորձել է բացահայտել հայ մամուլում գործածված մի շարք հայտնի, երբեմն էլ մթազնված, մի դեպքում էլ անհայտ ծածկանուններ: Վերջինը վերաբերում է «Վարած» ծածկանվանը, որի բացահայտմանը նա նվիրել է նյութի առաջին հատվածը՝ «Ստեփան Ոսկանյանի նոր՝ «Վարած» կեղծանունը» ենթավերնագրով<sup>1</sup>: «Վարած» ծածկանունը բացահայտելու համար բանասերի միակ ելակետը «Մասիս» 1867 թ. սեպտեմբերի 30-ին (N 816) «Վաղարշ» ծածկանունով տպագրված հոդվածի հետևյալ հատվածն է, որը նա բերում է կիսատ և որոշ վրիպակներով.

«Հողինիդ կսիրեք [մի՛ ծածկեք], ըսեք ձեր մտքինը, որ հասկնանք: Եթե ոչ՝ «Մասիս» հետ ձախորդ վիճաբանություն և ունեցած և տակավին փափուկ սրտերնուդ առած վերքը բուժված չէ՞: Ո՞վ ատենոք լյուբսանպուրկի պանդոկը ճաշող և «բուն» հայեր տեսնել կարծիքով «անբան» (°) հայեր գտնող պարո՞ն, որո սիրելի են այնչափ բանաստեղծական անուններ փոխել. [արդյոք պիտի հաճի՞ք անգամ մ'ալ ձեր ամոթխած բողբ մեկ կողմ դնելով դեմքերնիդ մեզ ցուցնել]»<sup>2</sup>:

Պարզ երևում է, որ բերված քաղվածքում հեղինակը թեև նամական ուղղում է «Վարածին»՝ «մեծիմաստ պարոնին» և նրան է դիմում հոգնակի թվով, նկատի ունի մեկից ավելի ընդդիմախոսի և արտահայտվում է հոգնակի թվով («հոգինիդ», «սրտերնուդ», «դեմքերնիդ»): Ուրեմն նրա խոսքը հասցեագրված է ոչ թե մեկին, ասենք Ստ. Ոսկանյանին, այլ առնվազն երկու ընդդիմախոսի, որոնք վիճաբանություն ունեն «Մասիս» հետ: Սակայն կարևորն այդ չէ:

Ս. Շտիկյանը «Մասիսից» քաղած վերոհիշյալ հատվածից ելնելով. Ստ. Ոսկանյանի կենսագրական մի շարք փաստեր համապատասխանեցրել է մեջբերված տողերին և եզրակացրել՝ թե «հասկանալի» է, որ «ակնարկը... վերաբերում է Ս. Ոսկանյանին», որն իբրև թե «Վարած» ծածկանվան տակ 1867 թ. աշխատակցել է «Մաղիկ» հանդեսին: Մեր կարծիքով դա անստույգ փաստերի հիման վրա արվող եզրակացություն է:

Դեռ 1866-ից «Մաղիկը» և նրա խմբագիր Գ. Զիլինկիրյանը բուռն հոգվածներ են հրատարակել Ստ. Ոսկանյանի և նրա հիմնած Ուսումնասեր ընկերության, ապա և Զմյուռնիայում ծավալած նրա մանկավարժական գործունեության դեմ: Դրանց Ստ. Ոսկանյանը չի սպաստասխանել և «Մաղիկը»

1 ՀՍՍՀ ԳԱ «Վրաքեր», 1979, N 6, էջ 85—87:

2 Նույն տեղում, էջ 85: Հմմտ. «Մասիս», 30. IX 1867, N 816: Շղագրով և ուղիղ փակագծերով նշված են վրիպակները և բացթողումները:

մեկից ավելի անգամ մատնացույց է արել, որ Սա. Սսկանյանը լուում է: Անկախ այս հանդամանքից, հարձակումները, որ շարունակվում էին նաև 1867-ին, այնքան սուր էին, որ թեկուզ միայն այդ սլատճառով ծայրահեղ հետևողական հրապարակախոս-խմբագիր Ստ. Սսկանյանը չէր կարող որևէ սլայմանով աշխատակցել «Մաղիկին»: Սա մի կողմից: Մյուս կողմից «Վարած» ծածկանունը Ստ. Սսկանյանին վերագրելու համար Ս. Շտիկյանի առաջ քաշած բոլոր 3—4 կոպաններն էլ սլարդասլես համապատասխանեցված են: Նա առաջին հերթին ընթերցողին մատնացույց է անում այն, թե «Մասիսի» հետ տեղի ունեցած «ձախորդ» վիճարանության» մասին ակնարկելով, «Վաղարշը» նկատի ունի այդ թերթի խմբագրի և նրան աշխատակցող Խ. Մխաթյանի թունդ հարձակումները Ստ. Սսկանյանի և նրա հանդեսների դեմ: Բոլորովին ոչ: Վկայակոչվող այդ «վիճարանությունը» տեղի էր ունեցել 1859-ին, այսինքն յոթ-ութ տարի առաջ և բնավ առիթ չկար 1867-ին նրա մասին որևէ ակնարկ անելու համար: «Վաղարշի» խոսքը սլարդասլես վերաբերում է այն սուր բանավեճին, որ ազգային մի շարք հարցերի շուրջը դեռևս մղվում էր «Մաղիկի» և «Մասիսի» միջև 1867-ին, հենց «Վաղարշի» հիշյալ հոդվածը հրապարակ գալու օրերին: «Մասիսին» պատասխանում կամ նրա դեմ սուր հոդվածներ էին հրապարակում «Մաղիկի» խմբագիրը և հանդեսին աշխատակցող Մ. Մամուրյանը: «Մասիսը» սլաշտպանվում կամ հարձակվում էր մասնավորապես «Վաղարշի» ոչ այնքան էլ խորամիտ հոդվածներով: Պարզ է, որ խոսքը ոչ թե 1859-ին մղված վիճարանության, այլ 1867-ին տակավին տեղի ունեցող բանավեճի մասին է:

Ս. Շտիկյանի հաջորդ «կոպանը» հետևյալն է. «Վաղարշը» նաև ակնարկում է այն մասին, որ «Մաղիկի» հոդվածագիրը «ատենոք էյուքսանպուրկի պանդոկը» ճաշողներից մեկն էր: Վերհիշելով գրեթե քսան տարի առաջ Ստ. Սսկանյանի Փարիզում վարած ուսանողական կյանքը, Ս. Շտիկյանը, որևէ հիմնավորող փաստ չբերելով, հավաստում է, թե խոսքը Փարիզի «էյուքսանմբուրգյան պարտեզում» եղած «ոչ պակաս հանրահայտ մի սրճարանի» մասին է, ուր, իբրև թե, «ինչպես ցույց են տալիս քննությունները», այցելում էր Ստ. Սսկանյանը և ծանոթանում, «չատ նշանավոր ֆրանսիացիների հետ»: Գարձյալ փաստերի հարմարեցում «հայտնագործված» քաղվածքին: «Վաղարշը» կրկին որևէ սուրի շուներ հիշեցնելու, թե Ստ. Սսկանյանը քսան տարի առաջ ճաշում էր փարիզյան պանդոկում: Նրա խոսքը, ինչպես կտեսնենք ստորև, բոլորովին այլ բանի մասին է և առհասարակ չի վերաբերում Ստ. Սսկանյանին:

Բանասերի երրորդ «կոպանը» կապ ունի լիովին կոնկրետ և վաղուց ի վեր ճշգրտված փաստի հետ. իրոք, Ստ. Սսկանյանը 1853 թ. հրատարակել է «Ներքին համոզում» պամֆլետը՝ հեղինակային իր ինքնությունը բողարկելով «Բուն հայ մը» ծածկագրությամբ: Ուրեմն, եղրակացնում է Ս. Շտիկյանը, «Վաղարշի» ակնարկը («Բուն հայեր») վերաբերում է Ստ. Սսկանյանին: Բայց չէ որ խոսքը ծածկանվան շուրջն է, չէ որ ոչ «Մասիսի» հոդվածագրին, ոչ էլ 1867-ին և դեռ հաջորդ 10—15 տարիներին հայտնի չէր, թե ով է հիշյալ պամֆլետի հեղինակը, պարզված չէր, որ «Բուն հայ մը» անվանման տակ թաքնված է Ստ. Սսկանյանը: Հետևապես, «Վաղարշը» չէր կարող ակնարկել այն, ինչ հայտնի չէր և հազիվ թե բացահայտեր իրեն հայտնի

ծածկանունը, եթե նույնիսկ իմանար: Առհասարակ անբակտեի օրենք էր՝ չբացահայտել որևէ ծածկանուն:

Մի «կովան» ևս կա Ս. Շտիկյանի «ճշգրտումներում»: «Վաղարշը» լուրի «Զմյուռնիա» գրիտու փոխարեն բաղաբի անվանումը հիշատակում է «Զմյուռ» (պետք է լինի՝ «Զմիռ») համառոտագրությամբ, ինչպես իբրև թե «գրեթե միշտ օգտագործում» էր Ստ. Ոսկանյանը: Այդ էլ ավելացնելով նախորդ «կովաններին», բանասերը, ի վերջո, գրում է, թե «մնում է հանգել մեկ կարևոր եզրակացության, այն է՝ Զմյուռնիայի «Մաղիկ» հանդեսում 1860-ական թվականներին հոդվածներով հանգես եկող «Վարած» կեղծանունով հրատարակախոսը Ս. Ոսկանյանն է՞»<sup>3</sup>, Սակայն «Վարած» ծածկանունը «Մաղիկում» հայտնվել է 1867-ի մայիսից, երբ հանդեսը Կ. Պոլսից փոխադրվել է Զմյուռնիա (այստեղ հրատարակվել են նրա N 135—146-ը) և հանդիպում է նրա էջերում ընդհուպ մինչև «Մաղիկի» դադարելը՝ նույնամբերի 1-ը<sup>4</sup>: Չստորում, հանդեսի 12 համարներում տպագրված «Վարածի» ինը հոդվածներից յոթը («Քանի մը խոսք», «Քաղաքական ժողով ի Զմյուռնիա», «Պոլսի ու Փրկիչ հիվանդանոցը և մեծ. Փանոսյան կարապետ էֆենդին», «Մշտ խնդիր և նրիմյան», «Ազգային բանի մը հանելուկներ», «Վիճակավոր եպիսկոպոսներ եկան ու կերթան», «Եսայի պատրիարք յԵփեսոս») բացում են տվյալ համարը, ունեն խմբագրական հոդվածների նշանակություն, նվիրված են ազգային լուրջ հարցերի և առաջադրում են սկզբունքային խնդիրներ: «Վարածը» այնքան էր մոտ կանգնած «Մաղիկին», որ հանդես է եկել ոչ միայն նրա դադարմանը նախորդած 145-րդ համարի խմբագրականով, այլև ստանձնել է «Մասիսին» պատասխանելու խնդիրը՝ նույն համարում գետեղելով «Առ. պ. Վաղարշ յԵփրոպա մեծանուն տրամախոս» վերնագրով հոդվածը: մինչև անգամ գրեթե բացահայտելով իր ինքնությունը, նույնիսկ ուղղակի ասելով, թե «ում էր առարկում «Վաղարշը»:

Հավ իմանալով այս ամենը, բանասերը նախ պետք է, որ ձեռնպահ մնար վեցամսյա ժամանակամիջոցում տեղի ունեցածը ամբողջ 1860-ական թվականներին՝ տասնամյա մի պատմաշրջանի վերադրելուց: Այնուհետև, «ճշգրտումներին» նեղինակը պետք է նկատեր այն որոշիչ պարագան, որ «Վարածը» գերպայանցապես խմբագրականներով է հանդես գալիս, ուրիմն և նա սոսկ աշխատակցող չէ, այլ խմբագրական մարմնի վստահելի հեղինակ: Սակայն, վրիպելով այսօրինակ ամանրութներում», Ս. Շտիկյանը վրիպել է նաև հիմնական հարցում:

«Վարածի» հենց առաջին հոդվածի սոսկ միայն ընթերցումը հուշում է, որ նրա նեղինակը խոսում է ուղղակի «Մաղիկի» անունից: Արդեն Զմյուռնիայում տպագրվող «Մաղիկի» հենց անդրանիկ համարում նա ընթերցողին է դիմում «Քանի մը խոսք» խմբագրականով և բացատրում հանդեսի «վերստին իր հայրենի հողը» վերադառնալու հանգամանքը, շարադրում հանդեսի սպասելիքներն ու խնդիրները, նույնիսկ որոշ սկզբունքներ: Չստ այդմ, նա խոսում է առաջին դեմքով: Ահա, օրինակ, նա այդ հոդվածում գրում է. «Գառնաշունչ հովեր ստիպեր էին Մաղիկը գաղթել այլուր և ավելի ազատ օդ ու բերրի երկիր մը փնտոել: Սակայն որչափ որ մեկ կողմեն ազատություն

<sup>3</sup> ԶՍՍՀ ԴԱ «Լրարի», 1979, № 6, էջ 87.

<sup>4</sup> «Մաղիկ», 1867, № 135, 138—139, 142—145.

գտավ այս տարագրությանը. մյուս կողմեն այնպիսի դժվարություններու հանդիպեցավ. որ հեռավոր խմբագրության հարակից են և իր անկանոն հրատարակության ասիթ տվին: Այս անպատեհության վերջ տալու համար մեզ կմնար կամ Պոլիս Մաղիկին մոտ գնալ և ի մտուստ անոր խմբագրության գործերուն պարասիլ և կամ Մաղիկը այստեղ փոխադրել: Եվ այսպես. «Մաղիկը պիտի զգուշանա... Միշտ հաշտարար ուղղություն մը պիտի բռնե, ոչ այս և ոչ այն կուսակցության կողմը տաշելով, վասնդի Մաղիկի համար մեկ կուսակցություն կա միայն, այն է՝ ազգայինը: Այս տրամագրությամբ Մաղիկը կհուսա, որ իր հայրենակիցները սիրով կընդունին զինքը իր ծոցը և եթև սխալմունք մ'ըրած է՝ ներելով՝ անոր հառաջադիմության համար իրենց պաշտպանությունը և ձեռնտվությունը կշարունակեն և կավելցունեն»<sup>5</sup>:

Մի՞թե ակնհայտ չէ, որ հանձինս «Վարածի» հանգես է գալիս ոչ այլ որքան նա, ով «Մաղիկի» տերն ու տնօրենն էր, նրա իրավական խմբագիրը, երբ այն Ջմյունահայում էր լույս տեսնում և այն ժամանակ, երբ այն տպագրվում էր Կ. Պոլսում, բայց խմբագիրը շարունակում էր իր գործը Ջմյունահայում՝ հեռակա կարգով տնօրինելով հանդեսը: Պարզից էլ պարզ է, որ տվյալ դեպքում «Մաղիկի» ընթերցողին է դիմում և նրա անունից խոսում ոչ այլ որքան հանդեսի տնօրեն խմբագիրը: Բայց ձգտելով «Վարած» ծածկանունը վերագրել Ստ. Ոսկանյանին, Ս. Շտիկյանը չի նկատել, որ հանձինս «Վարածի» գործ ունենք հենց «Մաղիկի» խմբագիր Գ. Զիլինկիրյանի հետ: Նա էր 1861—1867 թթ. տնօրինում և խմբագրում իր հիմնած հանդեսը: Զնկատելով այդ, Ս. Շտիկյանը անտեսել է նաև այն կարևոր հանգամանքը, որ «Վաղարշի» «Տրամախոսությանը» կցված նամակում վկայակոչված է ոչ այլ ինչ, քան «Մաղիկի» № 143-ի հոդված-խմբագրականը՝ «Ազգային քանի մը հանելուկներ», որով բացվում է համարը, և որի տակ դրված է «Վարած» ստորագրությունը՝: «Մասիսի» հեղինակը՝ «Վաղարշը», ուղղակի պատասխանում է «Մաղիկի» հետևյալ մեղադրական երկխոսությանը. «—Ի՞նչ է պատճառը, որ Փունջը Մասիսի կոշիկները կուզե հագնել և փոխանակ պատավարանելու կտրամախոսե.— Վասնզի կարծես թե մոտա է:— Ինչո՞ւ համար Մասիսը քանի վարչություն փոխվի, լեզուն և կարծիքը կփոխե.— Պաշտոնական է»:

Ստանձնելով «Մասիսի» դատապաշտպանի դերը, «Վաղարշը» չի անդրադարձել հիշյալ խմբագրականի սուր և անողոր մյուս մերկացումներին, առաջ քաշած սկզբունքային խնդիրներին: Դրա փոխարեն նա մեջտեղ է քաշել «Մաղիկի» հենց նույն համարում տպագրված «Հայկական նամականի» հերթական հատվածը՝ առանց այդ մասին ուղղակի հիշատակություն անելու: Այսինքն՝ նա միաժամանակ պատասխանում է «Վարած»-ին. «Զիլինկիրյանին և «Հայկական նամականի» հեղինակ Մ. Մամուրյանին, որն իր հերթական դրությունը ստորագրել է «Վ» և ոչ թե «Նույր», ինչպես ստորագրում էր սովորաբար: «Վաղարշը», իհարկե, կարող էր նույնացնել «Վարածին» և «Վ.»-ին՝ Գ. Զիլինկիրյանին և Մ. Մամուրյանին: Ըստ այդմ, նա, ինչպես գրում է իր պատասխանում, գիտե՞ր թե ո՞ւմ դեմ է ուղղում իր ընդդիմախոսու-

5 Նույն տեղում, 15. V. 1867, № 135, էջ 577—578.

6 Նույն տեղում, 15. IX. 1867, № 143, էջ 611—612.

7 Նույն տեղում, էջ 641.

թյունը և մեղադրական հարցումները: Բերենք համապատասխան հատվածը. «Ինչն՞ն գիտեք, որ քանի վարչություն փոխվի՞ Մասիս ալ լեզուն և կարծիքը կփոխե, և ո՞վ ըսավ, թե Մասիս պաշտոնական է, որ վարչությունը պաշտպանած է: Բայց վարչական մը դիցուք թե պաշտոնական ալ եղած ըլլա, ձեզի ի՞նչ... Հոգինիդ կսիրեք, մի՛ ծածկեք. ըսեք ձեր մտքինը, որ հասկնանք: Եթե ոչ՝ Մասիսի հետ ձախորդ վիճաբանություն մ' ունեցած և տակալին փափուկ սրտերնուդ ստած վերքը բուժած չէ՞: Ո՞վ ատենոք Լուսնայուրկի պանտոկը ճաշող և «բուն» հայեր տեսնել կարծելով «անբան» (պիտի լինե՞ր՝ ասնբուն) — Մ. Հ.) հայեր գտնող պարո՞ն, որո սիրելի են այնչափ բանաստեղծական անուններ փոխել, արդյոք պիտի հաճի՞ք անգամ մ' ալ ձեր ամոթխած քողը մեկ կողմ դնելով դեմքերնիդ մեզ ցուցնել: Բայց ավա՞ղ, ձեր քող կարծածը դիմակ է, և մեք ալ գիտենք. թե այն դիմակին ներքև ո՞վ կա»<sup>8</sup>:

Այդ հատվածից էլ բանասեր Ս. Շտիկյանը քաղել է այն մասը, որտեղ «Վաղարշը» առարկում է Մ. Մամուրյանին՝ գրեթե մեջքերելով նրա նամակի տողերը: Ահա Մ. Մամուրյանի հերթական նամակի համապատասխան տողերը. «Հնոտի ու եղոտ գտակով անձի մը կհանդիպիս և անոր ձեռքը ստակ մը տալու կհորդորվիս, երբ սույն անձը Բոշիլտի թղթակիցը կգտնես. բուն հայ մը տեսնել կարծես՝ և անբուն հայ մը կգտնես... Մինչդեռ այսպես հարեվանցի ու կես մը կատակով կնկարագրեի Բերայի աշխարհը, երեկոյան դեմ Լուսնայուրկի սրճարանը մտանք ու վերի սրահը ելանք ճաշ ընելու»<sup>9</sup>:

Լիովին պարզ է. Մ. Մամուրյանի դեմ էր առարկում «Վաղարշը» և «բուն» հայ որոնելու, լյուքսեմբուրգյան պանդոկում ճաշելու մասին իր ակնարկները չենց նրան հասցեագրում: Պարզ է և այն, որ նա գիտեր, թե ով է «Հայկական նամականի» հեղինակը: Զէ՞ որ նրա նամականին «Ծաղիկում» վերաշարունակվում է սպագրվել այն բանից հետո, երբ «Վրույր»-Մամուրյանը, ինչպես աղղարարվել էր «Ծաղիկում»<sup>10</sup>, սկսում է աշխատակցել հանդեսին, չէ՞ որ նրա բուն ստորագրությունը՝ «Մ. Մ.», «Մ.» հապավված ձևերով, երևւում էր «Ծաղիկի» յուրաքանչյուր համարում:

Բայց եթե «Վաղարշը» կարող էր հասկանալի միտումով նույնացնել Մ. Մամուրյանին ու Գ. Զիլինկիրյանին, «Վ.» հապավումը՝ «Վարաժ» ծածկանվան հետ, ապա ի՞նչն է խանգարել «նշգրտումների» հեղինակին նկատելու ակնհայտը և «Հայկական նամականի» հեղինակ Մ. Մամուրյանին շփոթելու Ստ. Ոսկանյանի հետ՝ վերջինիս վերագրելով «Վարաժ» ծածկանունը: Մի՞թե «Ծաղիկին» առարկող «Վաղարշի» ընդդիմախոսականը կարդալով նա չի ծանոթացել վիճարկվող նյութին՝ «Ծաղիկի» № 143-ում «Վարաժի» հրատարակած հոդվածին և հանդեսի հենց այդ համարում գետեղված «Հայկական նամականի» հերթական նամակին, որոնք իրարից բաժանված են սոսկ մի հոդվածով, միմիայն մի էջով: Ըստ այդմ, հազիվ թե գտնվի որևէ մեկը, որին հայտնի չլինի, որ «Հայկական նամականի» հեղինակը Մ. Մամուրյանն է՝ «Վրույրը»:

Մ. Մամուրյանն ամենակատիվ մասնակցություն է ունեցել «Ծաղիկի» հրատարակության գործում, եղել է հանդեսի գործակալը Կ. Պոլսում, նրա

<sup>8</sup> «Մասիս», 30. IX. 1867, № 816.

<sup>9</sup> «Ծաղիկ», 15. IX. 1867, № 143, էջ 645, հմտ. Մ. Մամուրյան, Երկեր, Երևան, 1986, էջ 549—550.

<sup>10</sup> Նույն տեղում, № 11. 1867, № 131, էջ 548.

խմբագիր Գ. Զիլինկիրյանի մշտական պինակիցը և որոշիչ դեր է կատարել դեմոկրատական հանդեսի ընդհանուր ուղղության կայունացման, առաջադիմական գաղափարների պրոպագանդելու, նրա էջերից հետադիմության դեմ հետևողական պայքար մղելու գործում: Մ. Մամուրյանի այդ դերն ավելի է ընդգծվել «Մաղիկի» հրատարակության վերջին՝ պայուն հիմնական շրջանում, երբ վերականգնելով իր աշխատակցությունը հանդեսին, նա պարբերաբար նյութեր է հրատարակել նրա բոլոր համարներում, հանդես է եկել տարբեր ծածկանուններով՝ առանձին դեպքերում միաժամանակ գետեղելով մի քանի հոդված: Մ. Մամուրյանի ակտիվ աշխատակցությունը «Մաղիկին», իսկ որոշ ուսումնասիրողների կարծիքով նույնիսկ նրա խմբագրությունը ստանձնելը, ու որի համար գաղտնիք չէր: Թևակոխելով իր գոյության նոր շրջանը, դեռևս 1867 թ. փետրվարին, իր խմբագրականներից մեկում («Քանի մը խոսք առ ընթերցողս»), «Մաղիկը» հայտնում է, որ նպատակ ունի «իր թղթակցությունը, որ քանի մը պատճառով դադարած էր, Վրույրին հետ շարունակել»<sup>11</sup>:

Եանը սակայն չի սահմանափակվել հայտնի պատճառներով ընդհատված թղթակցության վերականգնումով: Դեռ 1866 թ. օգոստոսից Մ. Մամուրյանն աշխատանքի էր անցել Զմյուռնիայում, որտեղ և փոխադրված «Մաղիկում» նա միաժամանակ դարձավ հիմնական աշխատակիցը: Շատ կարճ ժամանակ անց՝ 1867 թ. մայիս-նոյեմբերին, նա ամիսը երկու անգամ լույս տեսնող պարբերականում հանդես է եկել շուրջ 30 անգամ՝ այլևայլ նյութերի հետ տպագրելով նաև «Աղգային սահմանադրություն» հոդվածաշարը, «Հայկական նամականի» յոթ հատվածները և Մ. Նալբանդյանին նվիրված երկու հոդված: Այդ ընթացքում նա բազմիցս նյութեր է հրատարակել ընդդեմ «Մասիսի»:

Զինվորագրվելով «Մասիսի» պաշտպանությանը, «Վաղարշը» փորձում էր ընդդիմախոսել «Մաղիկին», նրա խմբագիր Գ. Զիլինկիրյանին և Մ. Մամուրյանին, ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միաժամանակ: Մ. Շտիկյանի համար հիմք ծառայած հատվածում «Վաղարշը» հակիրճ նամակ է հղում «Վարաժին», այսինքն «Մաղիկի» խմբագիր Գ. Զիլինկիրյանին, այդ նամակում էլ միաժամանակ առարկելով նաև Մ. Մամուրյանին: Ըստ որում, նա կարծես թե մեկտեղում է երկու հրապարակախոսներին: Ահա ինչու «Վարաժ» — Զիլինկիրյանը պատասխանելով «Վաղարշին» ու «Վաղարշաբանություններին», ի դեպ, գրում է.

«Անշուշտ պետք է գիտնաք, քաղաքավար վիճաբան, թե ես ով եմ, արդեն անշուշտ ցած եմ ինքզինքս Մասիսին, անշուշտ դուք ալ կզգաք այն սուրին ծայրը, որ միօրինակ կշողա թե՛ Վարաժին, և թե՛ Վրույրին ձեռքը և գո՛ւ եմ, որ թեև երեսս գոց (իմա՝ թեև ծածկանունով է հանդես գալիս — Մ. Հ.), գրիչս դիս կմատնե, որովհետև ի՞նչ դեմք որ առնեմ, միշտ նույն ոգին, նույն սկզբունքը, նույն բերանը կգործածեմ և ձեր անձնական ակնարկությունը, այս ձեր գիրի մեջ անձ փնտռելու հին դրությունը արհամարհելով կարհամարհեմ»<sup>12</sup>:

Այդ ամենից բացի «Վարաժի» և «Վաղարշի» այլևայլ նյութերում ևս կարելի է գտնել ոչ քիչ թվով և բնավ ոչ երկրորդական կոմպաններ, որոնց վրա

<sup>11</sup> Նույն տեղում:

<sup>12</sup> Նույն տեղում, 15. Տ. 1867, № 145, էջ 664:

ուշադրություն դարձնելով, Ս. Շտիկյանը կհամոզվեր, որ «Վարածք» Ստ. Ոսկանյանը չէ և նրա դեմ չէին ուղղված «Վաղարշի» փատումները: Օրինակ, պատասխանելով «Ծաղիկի» № 145-ում իր դեմ տպագրված հոդվածին, նույն «Վաղարշը» սիրո, կանանց և ամուսնության մասին ասույթների «Փունջ» ժողովածուն համարում է «Վարածի» երկրպագության առարկան<sup>13</sup> և «Վարածի» կողմից էլ ասում՝ «ինչպե՞ս կհամարձակիս Վրույրին նամակին մեջ նետվելով, զայրույթդ հագեցնելու ոսկր մը փնտրելու: Ես այն ևմ, որո սուրին ծայրը միօրինակ կշողա...»<sup>14</sup>: Առհասարակ շատ տարօրինակ է, որ Ս. Շտիկյանը հարկ չի համարել քիչ թե շատ անդրադառնալ այն նյութերի բուն բովանդակությանը, լեզվին ու ոճին, հարցադրումներին, որոնց հեղինակային պատկանելությունը նա փորձում է պարզել և ընթերցողին ներկայացնելու Թիրոս հենց այդ է նրա վրիպելու հիմնական պատճառը:

Ի վերջո ստույգ չէ «Բանասիրական ճշգրտումների» հեղինակի այն փաստարկը, թե Ստ. Ոսկանյանն «իր ծննդավայրի անունը գրեթե միշտ օգտագործում էր «Զմյուռ» կամ «Զմյուռին» ձևով, ընդունված «Զմյուռնիա» կամ ավելի հաճախ՝ «Իզմիրի» փոխարեն, մի բան, որը դարձյալ հիշատակված է «Վաղարշի» «Տրամախոսության» մեջ...»<sup>15</sup>: «Զմյուռնիայի» փոխարեն «Զմյուռ», երբեմն էլ «Զմիր» օգտագործելը հենց Ս. Մամուրյանի սիրած ձևն էր, որ նա գործածում էր «Վարած» ծածկանունով հրատարակվող հոդվածները երևան գալուց շատ առաջ՝ տակավին 1865 թ. հունվարից՝ «Հայկական նամականիի» բոլոր հատվածներում<sup>16</sup>: Դրա համար էլ նրա դեմ հանդես եկող «Վաղարշը» գործածում է «Զմիր» անվանումը, այն ղեկավար շակերտներում: Ստ. Ոսկանյանի նախասիրած և գրեթե մշտապես գործածած ձևը եղանու մնացել է «Իզմիր» («Իզմիրի հայ», «Իզմիրցիք», «Իզմիրցիներ» և այլն), իսկ Ս. Մամուրյանի գործածած «Լյուքսենպուրկի» ու «Վաղարշի» մոտ վրիպակով «Լյուքսանպուրկ» դարձած գրելաձևի փոխարեն, ի դեպ, գործածում էր «Լյուքսենպուր» տառադարձումով<sup>17</sup>:

Թույլ տվեք լաև նկատել հետևյալը: Այս կամ այն ծածկանունը բացահայտելու փորձին պետք է նախորդի մանրազնին հետազոտությունը: Որևէ ծածկանուն մեկն ու մեկին վերագրելը լուրջ ու պատասխանատու գործ է և բանալի է տալիս վերծանված ծածկանունով հանդես եկած գործչին դիտարկելու մի նոր դիրքից ու այլ մոտեցումով, քան մինչ այդ, ավելի լայնակի

<sup>13</sup> Այս առթիվ տե՛ս «Պերճ»-Զիլինկիրյանի «Զմուռնական նամականիի» հատվածը՝ «Ծաղիկի» 15. IV. 1866 թ. (№ 118) համարում:

<sup>14</sup> «Մասիս», 18. XI. 1867, № 823.

<sup>15</sup> ՀՍՍՀ ԳԱ «Երասիր», 1979, № 6, էջ 87.

<sup>16</sup> Տե՛ս «Ծաղիկ», 1865, № 104, էջ 333 և Մ. Մամուրյան, նշվ. աշխ., էջ 404: Ի տարբերություն իր նախասիրած ձևի, Մ. Մամուրյանը «Հայկական նամականիի» 1866 թ. հուլիսի 17-ին գրած հատվածում («Ծաղիկ», 1867, № 143, էջ 644—645) «Զմյուռնի» փոխարեն օգտագործել է «Զմիր» համառոտագրությունը, որը «Վաղարշի» մոտ դարձել է «Զմիր», իսկ Ս. Շտիկյանը վերափոխել է «Զմյուռ» (համտ. «Ծաղիկ», 1867, № 143, էջ 644, 645, Մ. Մամուրյան, նշվ. աշխ., էջ 548, 551, «Մասիս», 30. IX. 1867, № 816, ՀՍՍՀ ԳԱ «Երասիր», 1979, № 6, էջ 87):

<sup>17</sup> «Արևելք», 1855, № 1 (շապիկին), № 5, էջ 151, 1856, № 14, էջ 417, «Արևմուտք», 1859, № 4, էջ 31, № 5, էջ 34, № 7, էջ 56, № 10, էջ 80, 1864, № 3, էջ 23, № 4, էջ 28, № 5, էջ 33, 37, № 6, էջ 46 և հետո: Ի դեպ, նույն ձևով է գրում նաև Գ. Զիլինկիրյանը՝ «Լյուքսանպուր» («Ծաղիկ», 1864, № 97, էջ 276—277 և հետո):

ժննելու նրա գործունեությունը և հայացքները: Ուղղակի և հաճառորդի ապացույցների բացակայության դեպքում, ինչ խոսք, պահանջվում է բազմապատիկ ջանք ու լրջություն:

ՄԻՔԱՅԵԼ ՀԱԿՈՐՅԱՆ

Վ ПО ПОВОДУ РАСКРЫТИЯ ПСЕВДОНИМА «ВАРАЖ»

МИКАЕЛ АКОПЯН

Резюме

Кандидат филологических наук С. Штикян в своей публикации «Филологические уточнения» (*ՀՄՄԷ ԳԱ «Լրարբեր», 1979, № 6*) пытается утверждать, что на страницах журнала «Цагик» в 1867 г. под псевдонимом «Вараж» выступал известный армянский публицист Степан Восканян. Однако сопоставление фактического материала явствует, что под псевдонимом «Вараж» на страницах журнала с мая по ноябрь 1867 г. публиковался сам основатель и редактор «Цагика» — Григор Чилинкирян. Как Г. Чилинкирян, так и основной сотрудник журнала М. Мамурян в 1866—1867 гг. вели острую полемику с Ст. Восканяном.

